

Ազատութեան մատենադարանին բոլոր պրոշիւրները կարմիր մատիտով ներկած ու վերծանած, վիճելով անոնց պարունակութեան վրայ ինքը իր շուքին հետ, ու պարպելէ ետք իր ուղեղին անոնց միտերքը, իջած կրկէս իբրեւ գործի՛չ, գեղերու ապշահար ամբոխներուն: Կրնար այդ տիպարին ետեւ ցաւագար մը, կէս խենթ մը, աղտահար ու ազնուական երիտասարդ մը բնակիլ...: Մաթիկ Մելիքխանեանց ուրուային Փանջունի մը չէր:

Ու չէր անիկա, անշուշտ, նոր երիտասարդը, վճռականութեամբ, բարձրութեամբ, տառապանքով ազնուացած, որ կը նստէր ահա իմ կուշտին, կովարձ Ակոյի քարայրին մէջ, խանձարուրուած հայոց հայրենիքին խորհրդանիշ դրօշով: Մեմֆ կը մեկնիմֆ մեզմէ, գմեգ կը պահեմֆ, բայց մեր վրայ տեղ բանալով բոլոր այն նրբութիւններուն, որոնք կեանքին ծուկնները, մղեղները ինչպէս կը թառին մեր վրայ, ճակատագրին հոսելիէն...: Բայց էր, միշտ այդ Մաթիկը, իմֆգիմֆը, այդ հոյակապ օրօրանին, ճեմարանին մէջ (անոր շրթները խռովքէ, հիացքէ կը թրթռային, երբ այդ բառը կ'արձակէր դուրս, վերափոխման սկիհէ մը փրթած սրբազան բանի մը նման) աշակերտ-յեղափոխականը, իր այժմու բառով ուտոպիստը, որով կը տարագուր լման կարգ մը, ա՛ն՝ որ հազիւ ազատուած փողոցէն, հացին ու տանիքին տազնապէն կրկնահալած ըլլալուն չափովը, կը լրջանայ մէկէն, կը հաւնի ինքզինքը, առատ ու դաժան արժեւորմամբ մը, ու կը յօժարի իր բարեհաճ զոհողութիւնը տարածել իր ազգին վրայ, ձրի ուսումը խղճահարութեան մը չվերածելու համար. կը հաւատայ բարիքը վճարել տոկոսով, կը զինաւորուի ազգին կարիքներուն, ինքզինքը հանդերձելով առագաստ ու տաճար արդարութեան, ազգերու եղբայրութեան ու երջանկալից փրկութեան նորագիր տասնաբանները ուսին...:

Ուրիշին պատմումէն դէպքեր կը սեւեռուին, բայց դժուար է կեանք նուաճել: Չեմ կրնար Մաթիկէն փրցրած սա կտոր-փրթուճ տեղեկութիւնները իբր ատաղձ